ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՀՀ Արագածոտնի մարզպետ

«Պրեստիժ» ամսագրի հարցերին պատասխանում է ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը:

Աշխատանքում ինձ համար առանցքայինը նախ պրոֆեսիոնալ, ապա՝ սրտացավ մոտեցումն է.

-Պարո՛ն Մովսիսյան, շուտով կլրանա մեկ տարին, ինչ նշանակվել եք ՀՀ Արագածոտնի մարզպետ: Դուք ծնունդով Արագածոտնի մարզի Փարպի գյուղից եք, հաշվի առնելով նաև այդ հանգամանքը՝ ինչպիսի՞ պատասխանատվություն է Ձեզ համար այս պաշտոնը:

-Այո, գալիք տարվա հունվարի 13-ին կլրանա իմ պաշտոնավարման մեկ տարին: Մարզպետի պաշտոնը ստանձնել եմ ամենայն պատասխանատվությամբ և հայրենիքումս մեծ բարեփոխումներ ու զարգացման ծրագրեր իրականացնելու նվիրական ցանկությամբ: Փարպեցի լինելն ինձ համար պատիվ է, միաժամանակ, պարտավորեցնող. գյուղը շատ մարդիկ է տվել, որոնց հանրօգուտ գործունեությունն արժանի է դրվատանքի: Ես էլ փորձում եմ նրանցից մեկը լինել: Գնահատականն, իհարկե, ժողովուրդն է տալիս, իսկ արարելու, շենացնելու ցանկությունն ու գործնական քայլերը մեզնից են բխում:

-2018-2021թթ. ՀՀ ԱԺ պատգամավոր աշխատած տարիներին, լինելով ԱԺ 7-րդ և 8-րդ գումարման Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, քաջածանոթ եք տվյալ ոլորտների գործունեությանը: Որքանո՞վ է օրենսդիրում ունեցած Ձեր փորձը օգնում մարզպետի աշխատանքում:

- Մեր երկրի առջև շատ խնդիրներ են ծառացած և թե՛ օրենսդիրում, թե՛ գործադիրում մեր աշխա-

«Տարվա ավարտը աշխատանքի պտուղները քաղելու, ձեռքբերումներն արձանագրելու եւ նոր նպատակներ գծագրելու գերբեռնված ժամանակահատվածն է:

տանքը նպատակաուղղված է դրանք լուծելուն: Փորձը, միանշանակ, օգնում է համակողմանի դիտարկել մարզում Ձեր նշած ոլորտներին առնչվող հարցերը և ճիշտ որոշումներ ընդունել: Մարզպետի պաշտոնն, իհարկե, իր առանձնահատկություններն ունի: Աշխատանքում ինձ համար առանցքայինը նախ՝ պրոֆեսիոնալ, ապա՝ սրտացավ մոտեցումն է. յուրաքանչյուր դեպքում պետք է խնդրին ճիշտ ախտորոշում տալ, առաջարկությունները քննության առնել ու, ի վերջո, ճիշտ եզրահանգում անել, համապատասխան որոշմամբ խնդիրը լուծել:

-Որո՞նք են որպես մարզպետ Ձեր աշխատանքային առաջնահերթ ծրագրերը:

-Ինձ համար առաջնահերթ են մարզի կենսագործունեության համար առանցքային ոլորտները՝ առողջապահություն, կրթություն, տնտեսություն, գյուղատնտեսություն... Նշված ոլորտներում մենք զարգացման հստակ տեսլական ունենք և արդեն մեկ տարի է՝ իրագործում ենք այն:

Ծավալուն աշխատանքներ ենք մեկնարկել մարզի բոլոր համայնքների դպրոցներում. տարեսկզբին աշխատանքային խումբ ենք ստեղծել, որը ուսումնասիրություններ է արել և արձանագրել դպրոցներում ամենահրատապ լուծում պահանջող խնդիրները, որոնք, իմ որոշումներով լուծում են ստացել: Մասնավորապես, մարզպետարանին հատկացված պետական բյուջեից վերաբաշխումների արդյունքում, գումարներ են հատկացվել դպրոցներին՝ մարզադահլիճների, հանդիսությունների սրահների, սանհանգույցների, տանիքների մասնակի վերանորոգումների, նոր համակարգիչների և գույքի ձեռքբերման, այլ վերակառուցման աշխատանքների համար: Ընդհանուր, 2022-ին կրթօջախների վերանորոգումներին հատկացրել ենք 324 մլն 292 հազար դրամ: Ոլորտային պատասխանատուների հետ մշտական քննարկումների ու խորհրդակցությունների, շրջայցերի միջոցով մշտադիտարկում եմ աշխատանքների ընթացքը:

-Պարո՛ն Մովսիսյան, ինչպե՞ս եք գնահատում համայնքների խոշորացման ծրագրի արդյունավետությունը:

-Իմ դիրքորոշումը շատ դրական է, համայնքների խոշորացման ծրագիրը ես դիտարկում եմ ռեսուրսների կենտրոնացման ու կառավարման գործընթացն առավել թիրախային դարձնելու տեսանկյունից: Ծրագիրը թույլ է տալիս համայնքի բնակավայրերի խնդիրները խոշորացույցի տակ առնել, մեծ աշխատանքային թիմով առաջ քաշել ու կենտրոնացնել դրանք, ապա մեծ աշխատանքներ կատարել՝ առանձին-առանձին զարգացնելով բնակատեղիները: Ուշագրավ է, որ, օրինակ, Կառավարություն-համայնք հա-

մագործակցությամբ՝ սուբվենցիոն ծրագրերով, ամեն տարի համայնքներում վերակառուցման լուրջ աշխատանքներ են արվում: Արդյունքում, արդեն մի քանի տարի անց կունենանք բարեկարգ գյուղեր ու քաղաքներ, զարգացած ենթակառուցվածքներ: Արդյունավետությունն ակնառու է, անձամբ ես բավականին բարձր եմ գնահատում:

-Խոսենք պետական սուբվենցիոն ծրագրերով մարզում իրականացվող ծավալուն վերակառուցման աշխատանքների մասին:

-Սուբվենցիոն ծրագրերը Կառավարություն-համայնք փոխգործակցությամբ մարզի ենթակառուցվածքները զարգացնելու լավագույն միջոցներից են: Արագածոտնի մարզի բոլոր 8 համայնքներում 2022 թ. իրականացվում են 19 սուբվենցիոն ծրագրեր՝ 3 776 818 080 ՀՀ դրամ նախնական արժեքով:

2022թ. ծրագրերից 4-ն արդեն ավարտված են, իսկ մնացած բոլոր սուբվենցիոն ծրագրերով նախատեսված



«Ես վստահ եմ՝ առաջիկա տարիներին կառուցվելիք ակադեմիական քաղաքը Արագածոտնի մարզին նոր շունչ կհաղորդի:

շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են և կավարտվեն 2022 թվականի ֆինանսական տարում՝ բացառությամբ 5 ծրագրերի:

Ծրագրերում առյուծի բաժինը հասնում է ասֆալտապատմամբ բնակավայրի փողոցների նորոգմանն ու կառուցմանը (6 ծրագիր): Ծրագրերում ներառված են այգիների պուրակների, լուսավորության ցանցի, հասարակական շենքերի, նախադպրոցական հաստատությունների, խմելու ջրի, ինչպես նաև ոռոգման համակարգերի կառուցման (նորոգման), շենքերի գազիֆիկացման աշխատանքներ:

Համեմատության համար նշեմ, որ 2021-ին մարզի 48 համայնքներում իրականացվել է 77 սուբվենցիոն ծրագիր՝ 2 252 569 809 դրամ ընդհանուր պայմանագրային արժեքով:

Ունենք նաև 2023 թ.-ի տեսլականը. մարզի 8 համայնքներում իրականացվելու է 38 սուբվենցիոն ծրագիր՝ 7 434 706 901 դրամ ընդհանուր նախնական արժեքով: Նախորդների համեմատությամբ, եկող տարվա ծրագրերն ու դրանցում կատարվելիք ներդրումն էականորեն ավելին են, ինչը համարում ենք ձեռքբերում:

-Գո՞ք եք մարզի այս տարվա արձանագրած արդյունքներից:

-Ընդհանուր առմամբ, կարելի է ասել՝ գոհ եմ, տարեվերջին, ամփոփելով բոլոր ոլորտներում իրականացված աշխատանքների արդյունքները, կունենանք առավել ամբողջական պատկեր: Առաջիկա օրերին մի շարք դպրոցների վերակառուցված մարզադահլիճների, դահլիճների բացումը կանենք, ավարտված սուբվենցիոն ծրագրերի արդյունքը կդիտարկենք... Տարվա ավարտն աշխատանքի պտուղները քաղելու, ձեռքբերումներն արձանագրելու և նոր նպատակներ գծագրելու գերբեռնված ժամանակահատվածն է:

-Ի՞նչ հաջողություններ են արձանագրվել ՀՀ Արագածոտնի մարզի գյուղատնտեսության ոլորտում:

-Այս տարի պետական աջակցությամբ իրականացվող մի շարք գյուղատնտեսական ծրագրեր են մեկնարկել ու մեր մարզի ֆերմերները ևս դարձել են այդ ծրագրի շահառու: Բացի դրանից, գոհ ենք գյուղատնտեսական արտադրանքի ծավալներից, գյուղմթերքի իրացման գործընթացից: Օրինակ, այս տարի, ոչ մի խաղողագործ բերքն իրացնելու խնդիր չի ունեցել, ինչը ևս համարում ենք ոլորտում ձեռքբերում: Արձանագրել ենք նաև աշնանացան ցորենի ցանքերի ավելացում, ինտենսիվ այգիների, ջերմատների, թռչնամսի արտադրության քանակի աճ: Հաջողություններից մեկն էլ կարող ենք համարել այն, որ մեր մարզը ամենաշատ գյուղատնտեսական ԱՊՊԱ պայմանագրեր կնքած մարզերի շարքում է, այսինքն, մեր ֆերմերներն առավել ճկուն ու գրագետ են դարձել իրենց գործում:

Մեզ համար կարևոր է գյուղացու, արտադրողի աշխատանքը հեշտացնելը, բերքի մշակումից մինչև դրա իրացում գործընթացում դժվարությունները հնարավորինս մեղմելը: Գյուղատնտեսությունը առաջնային ոլորտներից է մարզում և ամեն ինչ անում ենք արդիականացման, նորագույն՝ «խելացի» համակարգերի ներդրման, եկամտաբերության ավելացման ուղղությամբ:

-Պարո՛ն Մովսիսյան, ինչպիսի՞ աշխատանքներ են տարվում Արագածոտնի մարզում ոռոգման համակարգի վերակառուցման և արդիականացման ուղղությամբ:

-Ոռոգման համակարգի արդիականացման առումով մեծ ծավալի աշխատանք ունենք անելու: Թե՛ պետական օժանդակությամբ, և թե՛ սուբվենցիոն ծրագրերով արդիականացվում են տարբեր համայնքների ոռոգման ցանցերը:

Վերջերս Ջրային կոմիտեի նախագահ Վահագն Գևորգյանի հետ դիտարկեցինք պետական ծրագրով Թալինում գործող Շտրեկի պոմպակայանում կատարված աշխատանքները: Այսինքն՝ ոլորտի խնդիրները, բոլոր համայնքները ներառյալ, մեր օրակարգում են և մենք ջանում ենք առաջիկա ժամանակահատվածում արձանագրել մարզի ոռոգման ցանցի էական բարելավում:

-Ներդրումային ի՞նչ ծրագրեր են իրականացվել մարզում և արդյո՞ք առաջիկայում նման ծրագրեր կան:

-Մեր մարզը ներդրողների համար մեծ հետաքրքրություն ներկայացնող է: Անցնող տարում մի շարք ներդրողների հետ առանձին-առանձին զրույցներ եմ ունեցել, ծանոթացել նրանց բիզնես նախագծերին, միասին քննարկել ենք նպատակահարմար հողատարածքներ ու շինություններ ձեռք բերելու հարցերը և պատրաստակամություն եմ հայտնել ամեն կերպ աջակցելու նրանց:

Խոշոր ներդրումային ծրագրերից ցանկանում եմ խոսել նախ զբոսաշրջության ոլորտում իրականացվողների մասին: «Մայլեռ մաունթայն ռեսորթ» կազմակերպության կողմից շուրջ 30 մլրդ դրամի ծրագրի շրջանակում նախատեսվում է Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրին մոտ լեռնադահուկային համալիրի կառուցում:

Նախնական համաձայնություն կա «Ռիդ» ՍՊԸ-ի հետ, ըստ որի, նախատեսվում է Ապարան համայնքի Արագած և Վարդենուտ բնակավայրերի տարածքում ևս լեռնադահուկային կենտրոն ստեղծել, ինչն իր մեջ ներառում է նաև ջրամբարի և էկոմթերքի արտադրությամբ զբաղվող մոտ 300 ֆերմերային տնտեսությունների հիմնում:

Մեր մարզում առանձնապես մեծ թափով զարգացում է ապրում արևային էներգետիկան: Կառուցվում են արևային էլեկտրակայաններ, որոնք հիմնականում տեղակայվում են էԹալինի շրջանում, մասնավորապես, այս պահի դրությամբ արդեն առկա են 90 Մվտ հզորությամբ արևային կայաններ: «Մազդար» ընկերության կողմից՝ Կառավարության հետ համագործակցությամբ, նախատեսվում է Թալինում կառուցել տարածաշրջանում ամենախոշոր արևային էլեկտրակայանը, որը կունենա մոտ 200 Մվտ հզորություն: Այդ նպատակով կներդրվի 170 մլն ԱՄՆ դոլար: Մեկ խոսքով, մարզում ներդրումային միջավայրը, ի ուրախություն մեզ, բարենպաստ է և աշխույժ:

-Ի՞նչ վիճակում են մարզի կրթամշակութային օջախները, ի՞նչ խնդիրներ են առկա դրանցում: Պետական ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերից որո՞նք կնշեք:

-Մարզի կրթամշակութային օջախները՝ արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոցները, ինչպես նաև մշակույթի տները համայնքային ենթակայության տակ են: Ըստ այդմ, համայնքի և մարզպետարանի համագործակցությամբ լուծվում են առկա խնդիրները, որոնք, ըստ էության այդքան էլ մեծ չեն: Այսինքն, այդ օջախները բարվոք վիճակում են: Օրինակ՝ Աշտարակի, Ապարանի, Թալինի արվեստի, գեղարվեստի դպրոցները նոր վերանորոգված

«Արագածոտնի մարզը ներդրողների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

և նոր գույքով կահավորված են: Պետական ֆինանսավորմամբ իրականացվող վերջին ծրագրերից է «Քո արվեստը դպրոցում» հանրապետական ծրագիրը, որը մշակութային հաղորդակցություն է մայրաքաղաքի և մարզերի աշակերտության միջև, փորձի փոխանակության լավագույն օրինակ և ներգրավում է մեծաթիվ դպրոցականների, ուսուցիչների: Մեր մարզի կրթամշակութային օջախների սաներն ակտիվորեն մասնակցում և Արագածոտնը ներկայացնում են պետական աջակցությամբ տարբեր մարզերում իրականացվող մշակութային միջոցառումներում, օրինակ «Մշակութային վերածնունդ» արվեստների և արհեստների փառատոնին: Կրթամշակութային օջախների գործունեությունը մարզում ակտիվ է:

-Ինչպե՞ս կգտնահատեք ՀՀ վարչապետի այցը մարզ, ի՞նչ կարևոր շեշտադրումներ են արվել նրա կողմից: Խոսենք «Աշտարակը ակադեմիական քաղաք» ծրագրի մասին:

-Վարչապետի այցը բավականին արդյունավետ էր: Այցի հիմնական նպատակն էր Աշտարակն ակադեմիական քաղաք դարձնելու գաղափարը և բուհերի տեղակայման գործընթացը տեղում և ոլորտի համապատասխան պաշտոնատար անձանց հետ քննարկելը: Մասնավորապես, շեշտադրումը հետևյալն էր՝ ութ պետական բուհեր պետք է գործեն Աշտարակում, և այստեղ պետք է լինի ժամանակակից կրթական ստանդարտներին համապատասխան ակադեմիական միջավայր:

Վարչապետի այցի ընթացքում առարկայական խոսվեց գործընթացը կազմակերպելուն վերաբերող հիմնական հարցերի շուրջ՝ դասախոսների և ուսանողների կեցության վայրի կառուցումից մինչև բուհերի ժամանակակից ենթակառուցվածքների ստեղծում: Իրականում գաղափարը շատ ողջունելի է, և ես վստահ եմ՝ առաջիկա տարիներին կառուցվելիք ակադեմիական քաղաքն Արագածոտնի մարզին նոր շունչ կհաղորդի՝ թռիչքաձև առաջ մղելով նրա զարգացումը, ինչու չէ՝ նաև բարձրագույն կրթության ոլորտում նոր որակ ու մակարդակ բերելով:

-Առողջապահությունը առաջնային կարևորություն ունի, հատկապես մարզերում որակյալ բուժծառայությունների մատուցման ոչ բավարար մակարդակի խնդիր կա: Ինչպիսի՞ իրավիճակ է տիրում Ձեր մարզում:

-Այս պահին մեր մարզի համայնքների խոշոր բուժհաստատություններում պետական ծրագրերով հիմնանորոգման աշխատանքներ են ընթանում: Մասնավորապես, Աշտարակի, Թալինի, Ծաղկահովիտի բժշկական կենտրոնները վերակառուցվում են: Կառավարությունը խոշոր ներդրումներ է կատարել մարզում առողջապահական ոլորտի արդիականացման համար, օրինակ, Աշտարակի ԲԿ-ի հիմնանորոգման համար հատկացումը կազմում է 1 մլրդ 500 մլն դրամ, գրեթե նույնքան էլ՝ 1 մլրդ 200 մլն դրամ, հատկացված է Թալինի ԲԿ վերակառուցման համար: Արդյունքում, կունենանք ժամանակակից շենքային պայմաններ, նոր գույք ու սարքավորումներ, մրցունակ բուժանձնակազմ: Շատ շուտով մեր քաղաքացիները կկարողանան հենց իրենց մարզում ստանալ բարձրորակ բուժծառայություններ և դրա համար չհասնել մայրաքաղաք:

Ոչ բավարար մակարդակի բուժծառայությունները շուտով անցյալում կմնան, բարենպաստ նախապայմաններն առկա են:

«Առաջիկա տարիներին նախատեսվում է շահագործման հանձնել 2 լեռնադահուկային համալիրներ՝ արդիական ենթակառուցվածքներով:

-Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում զբոսաշրջության զարգացմանն ուղղված:

-Արագածոտնի մարզը զբոսաշրջային մեծ գրավչություն ունի: Մարզում են գտնվում մի շարք պատմամշակութային կոթողներ, տեսարժան վայրեր, որոնք ապահովում են թե՛ տեղացի, թե՛ օտարերկրացի զբոսաշրջիկների հոսքը դեպի Արագածոտն: Նաև առավելությունն այն է, որ մարզը մայրաքաղաքին բավականին մոտ է, և Երևան եկած զբոսաշրջիկները արագ կարող են հասնել այստեղ: Ամբերդը, Օշականը, տառերի պուրակը, Սաղմոսավանքը, 4-րդ դարի Աղձքի դամբարանը և շատ ու շատ վայրեր զբոսաշրջային հիմնական ուղղություններից են մարզում: Նաև մասնավոր ընկերությունների կողմից ստեղծված դիտարժան ու ժամանցային շատ վայրեր ունենք: Առաջիկա տարիներին նախատեսվում է շահագործման հանձնել 2 լեռնադահուկային համալիրներ՝ արդիական ենթակառուցվածքներով, ինչը էքստրիմի սիրահարներին ևս կբերի Արագածոտն:

Պատմամշակութային վայրերի մասով կցանկանայի նշել, որ պետական միջոցներով առաջիկայում կվերա-

Աշխատանքում ինձ համար ուղենիշը պետականամետ մտածողությունն է. աշխատել ի շահ հայրենիքի, ի նպաստ Հայաստանի Հանրապետության, ժողովրդի:

կանգնվի Դաշտադեմի ամրոցը, որի համար պետությունը կհատկացնի 570 մլն դրամ, այստեղ կհիմնվի պատմամշակութային թանգարան, որը կարող է դառնալ կարևոր զբոսաշրջային ենթակառուցվածք: Ամբերդ ամրոցում ևս պետական միջոցներով կիրականացվեն վթարային հատվածների ամրացման ու վերականգնման աշխատանքներ և այլն: Այսինքն, պետական հոգածությամբ պահպանվում ու վերականգնվում են մեծ պատմական արժեք ունեցող կոթողները: Ուրախ եմ արձանագրել, որ նաև մեր բարերարների կողմից են մեծ ներդրումներ արվում (600 մլն ՀՀ դրամի հասնող) եկեղեցիների վերականգնման ուղղությամբ. այս պահին վերակառուցման մեծ աշխատանքներ են ընթանում Թալինի 7-րդ դարի Կաթողիկե եկեղեցում և 4-րդ դարի Սուրբ Աստվածընկալ վանական համալիրում: Բարերարներին ես իմ երախտագիտությունն եմ հայտնում այս հայրենանվեր գործի համար:

-Ինչպիսի՞ փոխհարաբերություններ ունեք մարզի բնակչության հետ, ի՞նչ խնդիրներով են Ձեզ դիմում:

-Մարզի բնակիչների հետ իմ կապը բավականին ակտիվ է, ես մոտ եմ կանգնած ժողովրդին՝ հավատարիմ մնալով մեր Կառավարության որդեգրած ժողովրդավարական մոտեցմանը:

Ժողովրդի խոսքը, կարծիքը, խնդիրը, ցանկությունը ինձ համար էական նշանակություն ունի:

Տարբեր ձևաչափի հանդիպումների ընթացքում շփվում եմ բնակչության հետ, լսում նրանց խնդիրներն ու ինձ վերապահված լիազորությունների շրջանակում փորձում լուծում տալ դրանց:

Քաղաքացիների հետ իմ մշտական կապն ապահովվում է նաև յուրաքանչյուր ուրբաթ մարզպետարանում տեղի ունեցող քաղաքացիների ընդունելությամբ, որի շրջանակում ամեն շաբաթ տասնյակից ավելի քաղաքացիների խնդիրներ եմ լսում, լուծում տալիս դրանց: Դիմելիությունը բարձր է, հիմնականում ներկայացնում են սոցիալական, աշխատանքային, առողջապահական բնույթի հարցեր: Ես կանգնած եմ քաղաքացու կողքին:

-Պարո՛ն մարզպետ, կա՞ հստակ գաղափարախոսություն կամ աշխատանքի բանաձև, որով առաջնորդվում եք:

-Ինձ համար աշխատանքը զուտ որևէ ուղղորդված գործողություններ կատարելու գործընթաց չէ: Աշխատանքում ինձ համար ուղենիշը պետականամետ մտածողությունն է. աշխատել ի շահ հայրենիքի, ի նպաստ Հայաստանի Հանրապետության, ժողովրդի: Աշխատանքն առավել մոտիվացված է լինում, երբ կատարողն այն ընկալում է որպես իր ուսերին դրված վսեմ առաքելություն, աշխատանք՝ հանուն կարևորի: Իսկ պետությունից, հայրենիքից վեր ու կարևոր ի՞նչ կա...

-Ինչպիսի՞ն եք ուզում տեսնել Ձեր փոքր հայրենիքը:

-Մեր փոքր հայրենիքը մեծ ու ուժեղ է յուրաքանչյուրով: Հայրենիքը մենք ենք՝ մարդիկ, նրա արժանի զավակները: Ուստի, անելիք ունենք բոլորս, և իմ հավատամքն է՝ միասնական ու տքնաջան աշխատանքով մենք կառուցում ենք մեր իղձերի կենսունակ ու մրցունակ հայրենիքը, որն աշխարհին ներկայանալու է որպես վերընձյուղված և ուժեղ Հայաստան: Ի գործ: